Կ Ա Ր Ծ Ի Ք

Բինգյոլ Գրունիկի Ամիրյանի «Բիզնեսի արժեքի գնահատման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտական տեսանկյունից բիզնեսը, որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ, կարելի է դիտարկել որպես համակարգային բնույթ ունեցող յուրահատուկ ապրանք, որն ունի ապրանքային հարաբերություններին բնորոշ հատկություններ, այդ թվում՝ գին և արժեք: Որպես ապրանքային հարաբերությունների օբյեկտ՝ ցանկացած բիզնես առանձնահատուկ է, չունի կրկնօրինակներ և բացարձակ համարժեքներ: Եթե բիզնեսի գնի առումով կարելի է հղում անել առաջարկի և պահանջարկի օրենքներին, ապա արժեքի պարագայում խնդիրը շատ ավելի բարդ է:

Բիզնեսի արժեքի գնահատման անհրաժեշտությունը կարող է ծագել հասարակական հարաբերությունների ամենատարբեր ոլորտներում, այդ թվում բիզնեսի օտարման գործընթացներում որոշումներ կայացնելիս, բիզնեսի բաժնեմասերի սեփականությունը ստանձնելիս, ապահովագրական ռիսկերի գնահատման ժամանակ, դատավարական գործընթացներում սեփականության իրավունքի հարկադիր գործադրման, հանրային շահի կիրառման վնասի փոխհատուցման ժամանակ և այլն: Նման գործընթացներում ի հայտ է գալիս բիզնեսի արժեքի օբյեկտիվ գնահատման անհրաժեշտություն:

Զարգացած կապիտալի շուկա ունեցող երկրներում բիզնեսի արժեքի գնահատման մոտեցումները հաճախ փոխկապակցվում են շուկայական տեղեկատվության և ազդակների հետ: Ի տարբերություն դրա՝ չկայացած կապիտալի շուկայով երկրներում բիզնեսի արժեքի գնահատման գործընթացները շատ ավելի

սուբյեկտիվ են, ընդ որում, խնդիրն ավելի է բարդանում փոքր տնտեսությամբ երկրներում, որտեղ համեմատելի բիզնես գտնելը երբեմն անհնարին է:

Հայաստանի պարագայում բիզնեսի արժեքի գնահատման ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ցավոք, 30–ամյա շուկայական տնտեսության պատմության ընթացքում այդպես էլ չեն ձևավորվել: Նման պատկերը կարող է պայմանավորված լինել նաև Հայաստանում խոշոր բիզնես գործարքներում ուժային և տնտեսական ճնշումների մեթոդների գործադրման վերաբերյալ պտտվող լուրերի, որոնց պայմաններում բիզնեսի իրական արժեքի գնահատումը երկրորդային նշանակություն է ունեցել:

Տնտեսական հարաբերությունների զարգացման և ազատականացման ներկայիս միտումները նոր իրողություններ են ձևավորելու: Այս առումով խիստ արդիական է չկայացած կապիտալի շուկայի պայմաններում բիզնեսի արժեքի գնահատման գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակումը: Ուստի քննարկվող ատենախոսության թեման արդիական է և ունի գիտական մեծ հետաքրքրություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրությունում հեղինակը նպատակ է դրել ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում բիզնեսի արժեքի գնահատման մոտեցումները, բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրները, նախանշել դրանց հաղթահարման հնարավոր ուղղություններ, քննարկել բիզնեսի կառավարման արժեքահեն ռազմավարությունների ներդրման հնարավորությունները:

Այս նպատակի իրագործման համար ատենախոսությունում խնդիր է դրվել ուսումնասիրել բիզնեսի արժեքի գնահատման պատմական փորձը, տեսական և մեթոդական հիմքերը, դիտարկել ՀՀ բանկային հատվածում բիզնեսի արժեքի գնահատման մեթոդների կիրառության հնարավորությունը, բիզնեսի արժանահավատ արժեք ստանալու նպատակով հաշվարկել համապատասխան ցուցանիշներ և կիրառել պրակտիկայում, բացահայտել և վերլուծել բիզնեսի արժեքի աճին նպաստող գործոնները, առաջադրել բիզնեսի աճին նպաստող հնարավոր ռազմավարություններ ու գործիքակազմ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունն ունի գիտագործնական ուղղվածություն: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ըստ բաժինների՝ աշխատանքում ներկայացվել է՝

Ներածությունում ներկայացվել է հետազոտության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական արդյունքներն ու նորույթը, գիտագործնական նշանակությունը և արդյունքների ներդրումը, հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ *«Բիզնեսի արժեքի գնահատման տեսամեթոդական հիմքերը»* գլխում քննարկվել են բիզնեսի արժեքի գնահատման հասկացությունը և նպատակները, գնահատման օբյեկտների, սուբյեկտների և գործոնների շրջանակը, գնահատման մեթոդները:

Ատենախոսության երկրորդ՝ *«Բիզնեսի արժեքի գնահատումը ՀՀ բանկային համակարգում»* գլխում հեղինակն անդրադարձել է ՀՀ բանկային շուկային և արժեքի գնահատման շուկայական մոտեցման կիրառությանը, «Ամերիաբանկ» ՓԲԸ օրինակով բիզնեսի արժեքի դիսկոնտավորման մեթոդի կիրառության, ՀՀ ֆինանսական համակարգում բիզնեսի արժեքի գնահատման և աճի հիմնախնդիրներին:

Ատենախոսության երրորդ՝ *«ՀՀ բանկային համակարգում բիզնեսի արժեքի աճի հնարավորությունները»* գլխում հեղինակը ռազմավարությունը ներկայացրել է որպես բիզնեսի արժեքի աճի կարևոր փոփոխական, մարդկային ռեսուրսների կառավարումը՝ բիզնեսի արժեքաստեղծ գործոն, և մեծածավալ տվյալները՝ որպես բանկային բիզնեսի արժեքի աճի գործոն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության հիմնական դրույթները հանգեցվել են կոնկրետ

առաջարկությունների և եզրակացությունների, որոնցից գիտական նորույթ են պարունակում հետևյալ դրույթները՝

- փորձ է արվել կիրառել բետա գործակցի գնահատման եռամակարդակ մոտեցում,
- առաջարկվել է շուկայական գին/շահույթ գործակցին զուգահեռ կիրառել գին/շահաբաժին գործակիցը,
- առաջադրվել է կազմակերպության չբաշխված շահույթի և շահաբաժինների վճարման ռազմավարության մոտեցում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետազոտության վերաբերյալ հիմնական դիտողություններից կարելի է առանձնացնել.

1. Հետազոտության իրականացնելիս հեղինակը հստակ չի տարանջատել գին և արժեք հասկացությունների տնտեսագիտական բովանդակությունը: Չնայած առանձին երևույթների համատեքստում դրանց նույնական ներկայացնելու հնարավորությանը՝ հարկ է նշել, որ դրանց հստակեցումը թույլ կտար ավելի հիմնավոր եզրահանգումների կատարել:

2. Ատենախոսության 4-րդ և 5-րդ գիտական նորույթների քննարկման ժամանակ հեղինակը բավարար չափով չի մանրամասնել առաջարկվող մեխանիզմների արդյունավետությունը, չի տվել կազմակերպության արժեքի վրա նշված միջոցառումների ազդեցության գնահատական:

3. Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ հետազոտությունը ավելի լայն շրջանակներ ունի, քան ենթադրվում էր թեմայի վերնագրից: Բացի բիզնեսի գնահատման հիմնախնդիրների քննարկումից հեղինակն անդրադարձել է նաև բիզնեսի արժեքի ավելացման հնարավորություններին:

4. Հետազոտության գործնական կիրառությունը գործարկվել է առանձին բանկի օրինակով: Ցանկալի կլիներ, եթե հեղինակը քննարկեր նաև այլ, այդ թվում բորսայում չցուցակված բանկերի օրինակներ:

5. Բանկերի արժեքի գնահատման առաջարկված մոտեցումները ընդլայնելու մեծ պոտենցիալ ունեն: Ցանկալի կլիներ դրանցում ներառել բանկային գործունեության բոլոր ոլորտները բնութագրող գործակիցներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքների նշանակությունը: Բ.Ամիրյանի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը ՀՀ համար կարևոր են ու արդիական:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները: Հեղինակի կողմից մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են կիրառվել կազմակերպությունների արժեքի գնահատման աշխատանքներում:

Այսպիսով, Բինգյոլ Գրունիկի Ամիրյանի «Բիզնեսի արժեքի գնահատման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
Գրենական Էյ Էմ ՍՊԸ տնօրեն,
տնտեսագիտության թեկնածու Հ.Ա.Մարկոսյան

10 Հուլիս, 2020թ.